# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

" 1 " հունիսի 2013թ. № 56-Ա

## « ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ աշխատանքային օրենսգիրքի 112-րդ հոդվածի,<<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի թ) ենթակետի դրույթներով և համաձայն «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ծաղիկ Վարդանյանի անձնական դիմումի, **կ ա ր գ ա դ ր ում ե մ՝**

1. 2013թ. հունիսի 3-ից լուծել «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն » ՓԲԸ տնօրեն Ծաղիկ Վարդանյանի հետ 2010թվականի նոյեմբերի 24-ին կնքված N4 աշխատանքային պայմանագիրը:

Հիմք. ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 112, Ծ.Վարդանյանի անձնական դիմումը:

2. 2013թ. հունիսի 3-ից «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնել ընկերության նյարդաբան Վարդուհի Պետրոսյանի վրա մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ընկերության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթի անցկացումը:

Հիմք Վ. Պետրոսյանի անձնական դիմումը:

3.Ընկերության ակտիվների և պարտավորությունների գույքագրում, հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

| | |
|---|---|
| Ծատրյան Աշոտ | մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ (հանձնաժողովի նախագահ ) |
| Մարդյան Աշոտ | մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ |
| Կոզմանով Կառլեն | մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ |
| Ղազարյան Թադևոս | մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ |
| Վարդանյան Ծաղիկ | «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ նախկին տնօրեն |
| Պետրոսյան Վարդուհի | «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար |

4. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2013թ.հունիսի 1
ք. Կապան